ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷյՀ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/176 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	բասկետբոլի ամբողջական խաղային կոմպլեքսներ	բասկետբոլի ամբողջական խաղային կոմպլեքսներ	Լրակազմը բաղկացած է 1-3 կետերում նշված ապրանքներից. 1.FIBA 3x3 բասկետբոլի շարժական կանգնակ՝ վահանակով, օղակով և ցանցով- 1 լրակազմ FIBA 3x3 պաշտոնական մրցումների համար նախատեսված պրոֆեսիոնալ շարժական բասկետբոլային կանգնակ՝ ներքին և արտաքին օգտագործման համար՝ գործող FIBA հաստատմամբ: Կանգնակի առաջանցքը պետք է լինի 225 սմ: Կառուցվածքը պետք է ունենա արագ, անվտանգ և հեշտ շահագործվող բարձրացման ու իջեցման մեխանիզմ, ավտոմատ կայունացման համակարգ, բարձր ամրության պողպատե շրջանակ և անիվներ՝ հեշտ տեղաշարժման համար: Վահանակը՝ 12 մմ հաստությամբ ապակուց, ամբողջ պարագծով պողպատե շրջանակով: Օղակը՝ պրոֆեսիոնալ breakaway/dunk տեսակի՝ FIBA Level 1 և Level 2 հաստատմամբ կամ համարժեք գործող FIBA հաստատմամբ: Ցանցը՝ ամուր նեյլոնե, anti-whip տեսակի՝ 6 մմ: Կանգնակի հիմքի առջևի և կողային հատվածները, ինչպես նաև վահանակը պետք է ապահովված լինեն պաշտպանիչ բարձիկներով: Պահեստավորման դիրքում կանգնակի

				մոտավոր չափերը պետք է կազմեն 420×193×216 սմ, իսկ խաղային դիրքում՝ 491×193×398 սմ: Օղակի հիմնական խաղային բարձրությունը՝ 305 սմ՝ նաև 260 սմ դիրքի հնարավորությամբ: Կանգնակի հիմքում պետք է նախատեսված լինի լրացուցիչ բալաստային քաշ, որը թույլ կտա այն օգտագործել առանց հատակին պարտադիր խարսխման: Երկար տարածությամբ տեղափոխման համար պետք է նախատեսված լինեն բեռնիչով տեղափոխման համապատասխան բացվածքներ: Սարքավորումը պետք է համապատասխանի EN 1270 ստանդարտին և ունենա գործող FIBA հաստատում: Մատակարարը պետք է ներկայացնի առաջարկվող կոնկրետ մոդելի FIBA հաստատումը հավաստող փաստաթուղթը և արտադրողի տեխնիկական տվյալների թերթիկը: 2.FIBA 3x3 պաշտոնական/հաստատված բասկետբոլի գնդակ-48 հատ. FIBA 3x3 պաշտոնական մրցումների համար նախատեսված, FIBA 3x3 Approved հավաստագրում ունեցող բասկետբոլի գնդակ: Գնդակի շրջագիծը պետք է լինի 720–740 մմ (72–74 սմ), քաշը՝ 580–620 գ: Գնդակը պետք է լինի գնդաձև, ունենա առավելագույնը 12 կարան՝ յուրաքանչյուրի լայնությունը՝ ոչ ավելի, քան 6.35 մմ, և երկու հիմնական՝ միմյանցից հստակ տարբերվող գույն: FIBA Level 1 պահանջներին համապատասխան գնդակի արտաքին մակերեսը պետք է պատրաստված լինի կոմպոզիտային կամ սինթետիկ կաշվից և ապահովի պատշաճ բռնում ամբողջ մակերեսով:1800 մմ բարձրությունից ազատ անկման դեպքում գնդակի հետցատկի բարձրությունը պետք է կազմի 1035–1085 մմ՝ չափված գնդակի ստորին կետից: Գնդակի վրա պետք է նշված լինի արտադրողի կողմից առաջարկվող օդի ճնշումը կամ թույլատրելի ճնշման միջակայքը: Արտաքին մակերեսը պետք է զերծ լինի թունավոր և ալերգեն նյութերից, այդ թվում՝ AZO ներկանյութերից, լուծելի ծանր մետաղներից, ֆտալատներից և PAH նյութերից:Առաջարկվող գնդակը պետք է կրի FIBA լիցենզիայի սերիական համարը և FIBA 3x3 Approved տարբերանշանը: FIBA 3x3 Official Basketball-ի դեպքում կարող է կիրառվել համապատասխան FIBA 3x3 տարբերանշանը:

				Մատակարարը պետք է ներկայացնի առաջարկվող կոնկրետ գնդակի գործող FIBA հաստատումը կամ լիցենզավորումը հավաստող փաստաթուղթը և արտադրողի տեխնիկական տվյալները: 3.FIBA 3x3 մոդուլային շարժական մարզական հատակածածկ-252քմ FIBA 3x3 պաշտոնական մրցումների համար նախատեսված պրոֆեսիոնալ շարժական մոդուլային մարզական հատակածածկ՝ արտաքին օգտագործման համար: Հատակածածկի ընդհանուր անվանական տարածքը պետք է կազմի 18×14 մ՝ 252 քմ, ներառյալ 15×11 մ խաղային դաշտը և շրջակա անվտանգության գոտին: Համակարգը պետք է կազմված լինի շարժական, փոխկապակցվող մոդուլային սալիկներից և նախատեսված լինի բազմակի հավաքման, ապամոնտաժման, տեղափոխման ու կրկնակի տեղադրման համար: Հղումային նյութը՝ TPE (թերմոպլաստիկ էլաստոմեր), սալիկի անվանական չափը՝ 250×250 մմ, հաստությունը՝ 20 մմ: Հարվածակլանման հղումային ցուցանիշը պետք է լինի առնվազն 40%, իսկ գնդակի հետցատկը՝ առնվազն 98%՝ միաժամանակ համապատասխանելով առաջարկվող կոնկրետ համակարգի գործող FIBA Level 1 պահանջներին:Հատակածածկը պետք է լինի UV ճառագայթների և եղանակային ազդեցությունների նկատմամբ դիմացկուն, ապահովի համապատասխան սահքադիմադրություն ինչպես չոր, այնպես էլ խոնավ պայմաններում, ունենա ջրահեռացման հնարավորություն և պահպանի չափային կայունությունը արտաքին օգտագործման պայմաններում: Մակերեսին չեն թույլատրվում սուր եզրեր, բաց միացումներ, անկայուն սալիկներ կամ վտանգավոր եզրային անցումներ: Դաշտի գծանշումները պետք է համապատասխանեն գործող FIBA 3x3 պահանջներին, լինեն ճշգրիտ, շարունակական, բարձր կոնտրաստով և չսահող: Խաղային դաշտի չափը՝ 15×11 մ, ազատ նետման գծի հղումային հեռավորությունը՝ 5.80 մ, 2 միավորանոց աղեղի շառավիղը՝ 6.75 մ: Օղակի տակ պետք է նախատեսված լինի no-charge կիսաշրջան: Մատակարարման մեջ պետք է ներառվեն ամբողջական 252 քմ հատակածածկը, անհրաժեշտ եզրային և

				թեքահարթակային տարրերը, տեղադրման պարագաները, առնվազն 2% պահեստային ամբողջական սալիկներ, փաթեթավորումը, առաքումը, տեղադրումը, հավասարեցումը և վերջնական ստուգումը: Մարզական հատակածածկի համար պահանջվող երաշխիքային ժամկետը՝ առնվազն 5 տարի: Մատակարարը պետք է ներկայացնի առաջարկվող կոնկրետ մոդելի գործող FIBA հաստատումը, արտադրողի տեխնիկական տվյալների թերթիկը և տեղադրման ձեռնարկը, համապատասխան փորձարկումների հաշվետվությունները, նյութի հայտարարագիրը, գունային նմուշները, երաշխիքային պայմանները և մանրամասն քանակացուցակը: Լրակազմում ներառված ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, փորձարկումը և մեկ տարի ժամկետով սպասարկումը իրականացվում է Վաճառողի կողմից՝ Գնորդի կողմից նշված հասցեում: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրը՝ հաշված գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Պայմանագրի կատարման փուլում նշված ապրանքի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը, ինչպես նաև ապրանքի արտադրողից կամ նրա լիազորված պաշտոնական ներկայացուցչից տրամադրված երաշխիքային նամակ (MAF կամ DAF), որը հստակ հաստատում է մասնակցի իրավասությունը տվյալ արտադրանքը մատակարարելու Հայաստանի Հանրապետություն և տեխնիկական աջակցություն ապահովելու վերաբերյալ: Լրակազմում ներառված բոլոր սարքավորումները պետք է ունենան համապատասխանության սերտեֆիկատ Բասկետբոլի միջազգային ֆեդերացիայի FIBA կողմից: Վաճառողը պարտավոր է տրամադրել արտադրողի կողմից տրված նամակ երաշխիքային և

			հետերաշխիքային սպասարկումը Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրողի կամ պաշտոնական ներկայացուցչի (դիստրիբյուտոր) կողմից իրականացնելու համար: *Լրակազմում նշված բոլոր մարզական գույքերը պետք է լինեն նույն ապրանքանիշի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/176 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1			